ԲՈՆԱԳԱՂԹՈՒԱԾՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բոնագաղթուածների խնդիրը երկրի համար համեմատաբար նոր եւ առաւել ցաւոտ հարցերից է։ Նախկին Խորհրդային Միութեան տարածքում փախստականների ընդհանուր թիւը կազմում է մօտ 600 հազար մարդ, չհաշուած վերջին մի քանի ամսում Հարաւային Օսեթիայում եւ Կովկասում ծաւալուած դէպքերի հետեւանքով առաջացած բնակչութեան տեղաշարժերը։ Նրանց մեծ մասը հայեր են. հիմնականում Ադրբեջանից (320 հազար) եւ մի քանի այլ տարածքաշրջաններից (30 հազար)։ 210 հազարը ներկայումս գտնւում է Հայաստանում, մնացած 140 հազարը սփռուած է Ռուսաստանի տարածքում (Հիւսիսային Կովկաս, Ռոստով, Մոսկուա եւ այլն)։ Հանրապետութեան տնտեսութեան նախարարութեանը կից Տնտեսագիտութեան ինստիտուտի կողմից կատարուել են ընտրանքային սոցիոլոգիական հետազօտութիւններ Հայաստանի գիւղերում եւ քաղաքներում տեղաբաշխուած բոնագաղթուածների շրջանում, նպատակ ունենալով վերլուծել եւ բացայայտել նրանց միջավայրում առկայ հիմնահարցերն ու իրավիճակը։ Հատուածաբար ներկայացնում ենք այդ հետազօտութեան արդիւնքներն ու ուրուագծուող խնդիրները։

Հիմնահարցերի գումարելիները

Հայաստանի տնտեսութիւնն ու ընկերային ոլորտը փաստօրէն ի վիճակի չէին փախստականների այդ զանգուածի ընդունման, տեղաբաշխման ու առաւել եւս կեցութեան բարւոք պայմաններ ստեղծելու համար։ Ընդ որում առկայ են Եւ առարկայական, Եւ ենթակայական բնոյթի դժուարութիւններ։ Առարկայական դժուարութիւններից կարելի է առանձնացնել գաղթականների մեծ քանակը համեմատած հանրապետութեան տնտեսական եւ տարածքային հնարաւորութիւնների հետ, դրան գումարած աւերիչ երկրաշարժի հետեւանքներն ու ներկայ տնտեսական ճգնաժամը։ Բացի դրանից, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բնակչութեան «փոխանակութիւն»ը համարժէք չի կարելի համարել՝ արտագաղթեց գիւղական բնակչութիւն, իսկ ներգաղթեց հիմնականում քաղաքային բնակչութիւն։ Միւս կողմից, պէտք է նշել, որ ներգաղթած բնակչութեան մասնագիտական կազմը չի համապատասխանում հանրապետութեան ժողովրդական տնտեսութեան պահանջմունքներին։ Այս առարկայական դժուարութիւնների կողքին չի կարելի անտեսել նաեւ այն փաստը, որ առ այսօր հանրապետութիւնը կարծես թէ չի գիտակցել փախստականների հիմնահարցերի ծաւալներն ու բնոյթը։ Բացակայում է երեւոյթի համակողմանի եւ ամբողջական պատկերը, չկայ բոնագաղթուածների տեղաբաշխման, աշխատանքի տեղաւորման ու ընտելանալու յատուկ ու բաւարար պետական ծրագիր։

Հետազօտութեան արդիւնքներից ելնելով կարելի է ձեւակերպել բոնագաղթուածներին առնչուող, հանրապետութեան առջեւ ծառացած հետեւեալ խնդիրները.

1. Փախստականների կարգավիճակի ընդունում հանրապետութեան Գերագոյն խորհրդի կողմից։ Այն կ'ապահովի մի շարք արտօնութիւններ (ժամանակաւոր) փախստականներին գրանցման, աշխատանքի տեղաւորման, հարկման, վարկաւորման, վերապատրաստման եւ այլ հարցերում։ Այս կարգավիճակի ժամկէտը կարող է ժամանակաւոր լինել, ասենք, 5 տարի։ Պէտք է հաշուի առնել, որ նշուած միջոցառումը հանրապետութեան բիւջէի համար բաւականին ծանր կը լինի, հետեւապէս անհրաժեշտ է միաժամանակ ֆինանսաւորման ուրիշ աղբիւրներ եւս գտնել, օրինակ, միջազգային կազմակերպութիւններից։

2. Բնակարանային պայմանների ապահովում եւ տեղաբաշխում։ Շատ թէ քիչ բարւոք, սեփականը համարուող բնակարաններով ապահովուած են փախստականների միայն 60 տոկոսը, ընդ որում նրանցից մօտ 30 տոկոսը գոհ չեն տեղաբաշխումից եւ կը ցանկանային տեղափոխուել (հիմնականում հանրապետութեան կենտրոնական շրջաններ), փախստականների 40 տոկոսը կամ մօտաւորապէս 80 հազ. մարդ ապրում են յարմարեցուած շէնքերում՝ հանրակացարաններում, հանգստեան տներում, նոյնիսկ նախկին բանտում կամ հարազատների մօտ։ Փախստականների Կոմիտէի որդեգրած փաստօրէն բռնի կերպով հեռաւոր լքուած գիւղերում մարդկանց բնակեցման քաղաքականութիւնը պէտք է նկատել ոչ ճիշտ։ Փորձը ցոյց է տալիս, օրինակ, որ Վարդենիսի եւ Կրասնոսելսկի շրջաններում տեղաբաշխումից յետոյ սկսւում է փախստականների արտահոսք դէպի կենտրոնական շրջաններ կամ հանրապետութիւնից դուրս։ Այս միտումը մօտ ապագայում կարող է բերել այդ գիւղերի վերալքման։

3. Աշխատանքի տեղաւորման հարցերը։ Ըստ տուեալների, աշխատունակ փախստականների մէկ երրորդը չունի մշտական աշխատանք, իսկ աշխատողների էլ մէկ երրորդն էլ զբաղուած է ոչ մասնագիտական աշխատանքով։

4. Ընկերային-հոգեբանական յարմարուածութիւնը։ Լուրջ մտահոգութեան տեղիք է տալիս փախստականների եւ տեղացիների կուլտուր-կենցաղային առանձնայատկութիւնների եւ սովորութիւնների տարբերութիւնը։ Ընդ որում, ըստ սոցիոլոգների, այդ տարբերութիւնները կը պահպանուեն դեռեւս երկար տարիներ եւ միայն երրորդ սերնդի ժամանակ դրանք լրիւ կը վերանան։ Տպաւորութիւն է ստեղծւում, որ այս խնդիրը լրիւութեամբ չի գիտակցւում հանրապետութեան կառավարութեան եւ բնակչութեան կողմից։ Օրինակ, լեզուի հարցում փախստականների նկատմամբ նոյն պահանջներն են ներկայացւում, ինչ որ բնիկներին։

5. ՀՀ փախստականների գրծով Կոմիտէի գործունէութիւնը։ Ինչպէս ցոյց են տալիս հետազօտութիւնների արդիւնքները, Կոմիտէի աշխատանքը չի բաւարարում ներկայացուած պահանջներին։ Նրա ֆունկցիաներն ու իրաւասութիւնները բաւարար չեն։ Փախստականների շատ հարցեր չեն լուծւում այս պատճառով եւս, որը ոչ մի կերպ չի կարելի առարկայական համարել։

Հիմնահարցի արդիականութիւնը

Բոնագաղթուածների հիմնահարցի սրութիւնը, ելնելով հանրապետութեան շահերից, որոշւում է մի շարք կարեւոր հանգամանքներով։

1. Մարդասիրական։ Հայ փախստականների դրութեան իրաւայատկութիւնն այն է, որ նրանց մեծ մասը բոնագաղթել են ոչ թէ իրենց հայրենիքից օտար երկիր, այլ օտար տարածքաշրջանից (օրինակ, Բաքու քաղաքից)՝ իրենց պատմական հայրենիքը։ Եւ եթէ այլ դէպքերում հիւրընկալող երկիրը փախստականների առջեւ ոչ մի պարտաւորութիւն չի ունենում, բացի բարոյականից, ապա մեր դէպքում այդ բարոյական պատասխանատուութիւնը փախստականների՝ մեր հայրենակիցների առջեւ, վերանում է «անպայմանական պահանջի», առաւել եւս, որ հանրապետութիւնն ինքը ինչոր չափով Ադրբեջանից նրանց բոնագաղթի դրդմանը «մասնակից» է։

Այս հանգամանքի յատուկ կարեւորութիւնը պէտք է ընդգծել, քանի որ մնացած աշխարհի վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ, որն ինքը օգնութեան կարիք ունի, շատ բաներով պայմանաւորուած է նրանով, թէ որքանով մեր հանրապետութիւնը ազնուօրէն, հետեւողաբար եւ իր ուժերի ներածին չափով կը կատարի իր պարտքը փախստականների առջեւ։ Փախստականների համար պէտք է ստեղծուի առաւել բարենպաստ կարգավիճակ, նրանք պէտք է համոզուեն, որ գտնւում են ոչ օտար ափերում եւ որ նրանց խնդիրների լուծուելու են ու ուշադրութիւնը նրանց նկատմամբ ոչ թէ անցողիկ բնոյթ ունի, այլ պետական քաղաքականութեան տարր է։

2. Տնտեսական։ Պէտք է նշել, որ գաղթականները նրանց ապաստան տուող երկրների ապագայ հարստութիւնն են։ Հայաստանի փախստականները տիրապետում են նշանակալից (աւելի բարձր, քան միջին հաշուով հանրապետութեան բնիկ ազգաբնակչութիւնը) կրթական, մասնագիտական եւ աշխատանքային պոտենցիալի, որը չպէտք է մնայ ապարդիւն, մսխուի, այլ ընդհակառակը, պէտք է արուի ամէն ինչ որպէսզի այն ծառայի հանրապետութեան տնտեսական զարգացմանը։

Եթէ հանրապետութիւնը չկարողանայ օգտուել այս վերարտադրուող հարստութիւնից, ապա դժուար է սպասել, որ նրան կը վստահուեն այլ խոշոր չվերարտադրուող ներդրումներ կամ բարեգործական միջոցներ։

Ազգագրական։ Փախստականների տեղաւորման դժուարութիւնները ունեն նաեւ այն բացասական հետեւանքը, որ կարող է բերել նրանց հանրապետութիւնից հեռանալուն։ Պատահականութիւն չէր գաղթուածների 300 հազար քանակի մասին մամուլի տեղեկատուութիւնը։ Այդ թիւն աւելի հաւանական է, քանի որ մօտ 80 հազար բոնագաղթուածներ լքել են հանրապետութիւնը յոյս չունենալով մօտակայ տարիներին շատ թէ քիչ բարւոք կենսապայմաններ ունենալ Հայաստանում։ Պարզ է, որ նախկին ԽՍՀՄի այլ տարածքաշրջաններում էլ, յատկապէս վերջին տարիներին, հայ փախստականներին «գրկաբաց» չեն ընդունում։ Արդիւնքում, Միութիւնից արտագաղթի խթանման մէկ լրացուցիչ գործօնն էլ է առաջանում։ Ըստ էութեան այս փաստերը կարելի է գնահատել տարբեր ձեւերով։ Ինչքան շատ փախստականներ մեզ լքեն, այնքան քիչ խնդիրներ՝ հանրապետութեան համար, սա մէկ գնահատական։ Վայել չէ հայրենակիցների նկատմամբ, որոնք ի վիճակի են կրկնապատկել հանրապետութեան հարստութիւնը, այդքան անտարբեր լինել։ Այս էլ մէկ ուրիշ գնահատական։ Հասկանալի է, որ երկրորդ մօտեցման առաւելութիւնը պարզաբանման կարիք չունի։

Ընկերային-հոգեբանական։ Յայտնուելով ոչ սովորական միջավայրում, յաճախ առանց աշխատանքի եւ ընտանեկան օջախի, չկարողանալով ինքնահաստատուել եւ իրենց ուժերի ու ընդունակութիւնների կիրառման հնարաւորութիւններ գտնել, հազարաւոր փախստականներ կորցնում են իրենց մասնագիտական որակաւորումը եւ իրենց իրաւայատուկ հասարակական բարոյականութիւնը։ Իշխանութիւնների եւ տեղաբնակների հետ էլ «ընդհանուր լեզու» չգտնելով, չկարողանալով իրենց վիճակի ամբողջ դառնութիւնը հասկացնել դիմացինին, որպէս օրինաչափութիւն, փախստականները ներփակւում են իրենք իրենց մէջ, չկարողանալով արդէն նոյնիսկ սովորական երկխօսութիւն վարել, յաճախ այն փոխարինելով փոխադարձ զոռզոռոցներով ու վիրաւորանքներով։

Բացի հանրապետութեան ամբողջ բնակչութեան համար ընդհանուր դժուարութիւններից, բոնագաղթուածներն ունեն լրացուցիչ դժուարութիւններ կապուած բնակութեան նոր վայրերում տեղաւորման եւ յարմարուելու հետ։ Սակայն կայ մի դժուարութիւն եւս՝ տնտեսական իշխանութիւններից եւ տեղի բնակչութիւնից նրանց օտարացումը։ Տեղական (երբեմն էլ կենտրոնական) իշխանութիւնները, որոնց փախստականների դիմումները, խնդրանքները «խանգարում են նորմալ աշխատել», յաճախ սահմանափակում են փախստականներին ադրբեջանցիների կողմից լքուած եւ բնակութեան համար անպիտան հանրապետութեան ծայրամասային գիւղերն ուղարկելով եւ միաժամանակ խոստանալով նրանց խնդիրներով զբաղուել 5-10 տարի յետոյ, երբ հանգամանքները թոյլ կը տան։ Լուրջ ուշադրութիւն պէտք է դարձնել նաեւ արդէն տեղաւորուած փախստականների եւ տեղաբնակների միջեւ փոխադարձ անվստահութիւնն ու լեզուական պատնէշի առկայութեանը, որոնք ընկերային լարուածութիւն են ստեղծում հանրապետութիւնում եւ ինչ որ չափով բարերար հող են նախապատրաստում յանցագործութիւնների աճի եւ քրէական իրավիճակի խորացման համար։

Առանձին հիմնահարցերին կ'անդրադառնանք առաջիկայում։